ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-7

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար անալիզատորների և ռենտգեն սարքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 22.04.2026թ. N 237/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.05.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանվելյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Շահինյանը, Ն.Թադևոսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մանվելյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր «Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը:

-«Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և համակարգի միջոցով ներկայացրել է շտկված տարբերակը (կցվում է):

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ին և «ՄԵՅԴ ԹՈՒ ՄԵՅՔ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ:
2. Հաշվի առնելով, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններով «Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ի և «ՄԵՅԴ ԹՈՒ ՄԵՅՔ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2026 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝

-1-ին չափաբաժնով «Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

-2-րդ չափաբաժնով «ՄԵՅԴ ԹՈՒ ՄԵՅՔ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից ««Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ին և «ՄԵՅԴ ԹՈՒ ՄԵՅՔ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ից և «ՄԵՅԴ ԹՈՒ ՄԵՅՔ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանվելյան

Անդամներ՝ Գ.Շահինյան

Ն.Թադևոսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան